ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2014-05.05/167
05.05.2014 թ.

ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական
հիմնարկի պետ՝ Ա. Մխոյանին

Հարգելի պարոն Մխոյան,

2014թ. ապրիլի 2-ին կազմակերպության կողմից տեղակատվության հարցում է ներկայացվել ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ, խնդրելով տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե «2014թ. հունվարից մինչ օրս «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում ներքին կանոնակարգով սահմանված պատիժը կրելու կարգի և պայմանների խախտման համար քանի դատապարտյալի նկատմամբ է կիրառվել.

1) նկատողություն, որպես տույժի նշանակում (խնդրում եմ տրամադրել, թե ինչ արարք կատարելու համար է կիրառվել նկատողությունը):

2) Պատժախուց, որպես տույժի նշանակում (խնդրում եմ տրամադրել, թե ինչ արարք կատարելու համար է կիրառվել պատժախուցը)»:

2014թ. ապրիլի 11-ին Ձեր թիվ 40/20-8-726 պատասխան գրությամբ հայտնվել է որ, 2014թ. հունվարի 10-ից մինչ 2014թ. ապրիլի 2-ը ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ-ի ներքին կանոնակարգի խախտում թույլ տալու համար հայտարարվել է նկատողություն կամ պատժախուց են տեղափոխվել ընդանուր առմամբ 37 ազատազրկված անձիք:

Տրամադրված տեղեկատվության համաձայն 28 ազատազրկված անձանց նկատմամբ տույժ կիրառելու պատճառ է հանդիսացել բջջային հեռախոս պահելը (ընհանուր առմամբ վերը նշված ժամանակահատվածում ՔԿՀ-ից հայտնաբերվել է թվով 39 բջջային հեռախոսներ):

ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե

- ✓ 2014թ. հունվարից մինչ ապրիլի 2-ը «Վանաձոր» ՔԿՀ-ում 28 ազատազրկված անձանց մոտ թվով 39 բջջային հեռախոս հայտնաբերելու արդյունքում հարուցվել են արդյոք ծառայողական քննություններ, թե ոչ.
- ✓ եթե այո, ապա քանիսի դեպքում և ինչ ընթացք են ստացել հարուցված ծառայողական քննությունները.
- ✓ եթե ոչ, ապա ինչ պատճառով չեն հարուցվել ծառայողական քննություններ:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am